ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի

07.03. 2024թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 13 (տասներեք) անդամից 11-ը (տասնմեկը):

Նիստն ընդլայնված էր և մասնակցում էին նաև բաժինների պետերը

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ Ռեկտոր
2. Ն. Ավետիսյան՝ Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ,
3. Կ. Պետրոսյան՝ Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
4. Լ. Մարգարյան՝ Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն,
5. Հ. Մելքոնյան՝ Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն,
6. Լ. Մարտիրոսյան՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
7. Օ. Հովհաննիսյան՝ հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ,
8. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
9. Ա. Հովհաննիսյան՝ Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետ,
10. Գ. Ավետիսյան՝ Որակի ապահովման բաժնի պետ,
11. Ռ. Քալաջյան՝ Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. 2023-2024 ուստարվա բակալավրի առկա/հեռակա եվ մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման, դրանց լուծարային շրջանի եվ պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին հրամանում փոփոխությունների մասին

2. Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի V կուրսերի սովորողների՝ II կիսամյակում ուսումնական պարապմունքները կազմակերպելու մասին

3. Ռազմական ամբիոնի պետ Ա. Մկրտչյանի կողմից համալսարանի ռեկտորին ուղղված զեկուցագրի քննարկման մասին

4. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

2023-2024 ուստարվա բակալավրի առկա/հեռակա եվ մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման, դրանց լուծարային շրջանի եվ պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին հրամանում փոփոխությունների մասին

Պարոն Սերոբյանը անդրադարձ կատարեց 2023-2024 ուստարվա բակալավրի առկա/հեռակա եվ մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման, դրանց լուծարային շրջանի եվ պրակտիկաների կազմակերպման ժամատախտակում հեռակա ուսուցման համակարգի V կուրսերի 2-րդ կիսամյակի ուսուցման գործընթացի ժամանակացույցին և նշեց, որ այնտեղ նշված է 12.03.2024. մինչև 12.04.2024թ.-ը, սակայն, իր կարծիքով, այն չի համապատասխանում 4 շաբաթյա ժամկետի հետ, և առաջարկեց կատարել փոփոխություն. ուսուցման գործընթացը կազմակերպել 12.03. 2024թ. մինչև 09.04.2024թ.:

Ֆակուլտետներում V կուրսերի սովորողների 2-րդ կիսամյակի պարապմունքները կազմակերպելու և հերթերը ճշգրտելու համար պարոն Սերոբյանը լսեց դեկանների կարծիքները, ապա նաև որոշեցվին հերթերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

24.08.2023թ.-ի թիվ 17 Ռեկտորոտի որոշմամբ հաստատված 2023-2024 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի, գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման,

դրանց լուծարային շրջանի և պրակտիկաների կազմակերպման ժամանակահատվածների մասին հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի V կուրսերի 2-րդ կիսամյակի ուսուցման գործընթացը կազմակերպել 12.03. 2024թ. մինչև 09.04.2024թ. ներառյալ:

2. Ռազմական ամբիոնի բակալավրի կրթական ծրագրերով առկա ուսուցման IV և հեռակա ուսուցման V կուրսերի ամփոփիչ ատեստավորման քննությունները, մագիստրոսական թեզերի պաշտպանությունը անցկացնել նախատեսվող (հունիս-հուլիս ամիսներին) ուսումնազորային հավաքների պետական քննությունների ավարտից հետո՝ 15.07.2024-16.07.2024թ. ժամանակահատվածում:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ կողմ՝ 11, դեմ՝0, ձեռնպահ՝0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի V կուրսերի սովորողների՝ II կիսամյակում ուսումնական պարապմունքները կազմակերպելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի V կուրսերի սովորողների ուսումնական պարապմունքները II կիսամյակում կազմակերպել հետևյալ հերթերով.

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետում և Ռազմական ամբիոնում՝ I հերթով, Հասարակական գիտությունների և Հումանիտար գիտությունների ֆակուլտետներում՝ II հերթով:

Բակալավր (հեռակա) V կուրսեր	**12.03. 2024թ. մինչև 09.04.2024թ. ներառյալ:**
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ	I հերթ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ	I հերթ
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	II հերթ
Ռազմական ամբիոն	I հերթ

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ կողմ՝ 11, դեմ՝0, ձեռնպահ՝0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Ռազմական ամբիոնի պետ Ա. Մկրտչյանի կողմից համալսարանի ռեկտորին ուղղված զեկուցագրի քննարկման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ռազմական ամբիոնի պետ Ա. Մկրտչյանի կողմից իրեն ուղղված զեկուցագիր է ներկայացվել, որում նշվում է, որ առաջնորդվելով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 02.10.2023թ.№ 9/9.1.1./26669-2023. հանձնարարականով և նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ՇՊՀ ռազմական ամբիոն V կուրս I կիսամյակ վերականգնված ուսանող Կամո Վարուժանի Օհանյանի կրթության շարունակականությունը ապահովելը և ռազմական ամբիոնի կրթական ծրագրի առանձնահատկությունները՝ առաջարկում են կատարել փոփոխություններ I կիսամյակի առարկայական տարբերությունների հանձնման ժամկետների, II կիսամյակում նախատեսված դասընթացներին մասնակցելու և ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամկետների վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Առաջնորդվելով ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 02.10.2023թ.№ 9/91.1/26669-2023.հանձնարարականով և նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ՇՊՀ ռազմական ամբիոնի V կուրսի I կիսամյակ վերականգնված ուսանող Կամո Վարուժանի Օհանյանի կրթության շարունակականության ապահովումն ու ռազմական ամբիոնի կրթական ծրագրի առանձնահատկությունները՝ թույլատրել կատարելու հետևյալ փոփոխությունները.

1. 2023-2024 ուստարվա I կիսամյակի առարկայական տարբերությունները Կամո Վարուժանի Օհանյանին թույլատրել հանձնելու մինչև 12.04.2024թ., բացառությամբ ուսումնազորային հավաքի:
2. 2023-2024 ուստարվա II կիսամյակում նախատեսված դասընթացներին և ամփոփիչ ստուգումներին ուսանող Կ. Վ. Օհանյանի մասնակցությունը թույլատրել պայմանական՝ համաձայն ՇՊՀ ռեկտորի կողմից հաստատված ժամանակացույցի:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ կողմ՝ 11, դեմ՝0, ձեռնպահ՝0:

4. Ընթացիկ հարցեր

4.1 ԼՍԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի օտար լեզուների եվ գրականության ամբիոնի դասախոս Նաիրա Տեր-Մկրտչյանի ամուսնու մահվան առնչությամբ՝ նրա ընտանիքին տրվող դրամական օգնության մասին

Պարոն Սերոբյանը նշեց, որ ցավոք, մահացել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս Նաիրա Տեր-

Մկրտչյանի ամուսինը: Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հարգանքի տուրքի միջոցառումները կազմակերպվում են համալսարանի արհեստակցական կազմակերպության նախագահ Վ. Խաչատրյանի կողմից և նշեց, որ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի զեկուցագրի հիման վրա առաջարկում է Նաիրա Տեր-Մկրտչյանի ընտանիքին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Օտար լեզուների և գրականության ամբիոնի դասախոս Նաիրա Տեր-Մկրտչյանի ամուսնու մահվան առնչությամբ նրա ընտանիքին տրամադրել միանվագ դրամական օգնություն 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով /Հիմք՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ Ա. Գարեգինյանի 07.03.2024թ.-ի՝ համալսարանի ռեկտորին ուղղված դիմումը/:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝ կողմ՝ 11, դեմ՝0, ձեռնպահ՝0:

4.2 Պարոն Սերոբյանը անդրադարձավ ուսանողների ավարտական վկայականներում (դիպլոմներում) շրջանավարտի անուն ազգանունը ռուսերեն լեզվով ճիշտ գրելու հետ կապված հարցին և նշեց, որ քննարկման արդյունքում առաջարկվում է, որ շրջանավարտի կողմից ներկայացվի անձնագրի ռուսերեն լեզվով թարգմանված և նոտարական կնիքով վավերացված տարբերակը: Պարոն Սերոբյանը նշեց նաև, որպեսզի իրենք խուսափեն վկայականներում անուն ազգանունների հետ կապված տառասխալներ թույլ տալուց, հանձնարարեց դեկաններին ավարտական կուրսերի շրջանավարտներից պահանջել ներկայացնելու անձնագիրը ռուսերեն լեզվով թարգմանված և նոտարական կնիքով վավերացված կամ եթե ունեն ռուսերեն տարբերակով ծննդական, ապա այն ներկայացնել:

4.3 Որակի ապահովման բաժնի պետ տիկին Ավետիսյանի կողմից ներկայացվեց ուսանողների կարիքների վերհանման և դրանց հնարավոր լուծումների նպատակով 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո կազմակերպվող հանդիպումների ժամանակացույցը (կցված է): Պարոն Սերոբյանը հանձնարարեց տիկին Ավետիսյանին ըստ ժամանակացույցի հանդիպումները պատշաճ իրականացնել:

Ուսանողների կարիքների վերհանման և դրանց հնարավոր լուծումների նպատակով 2023-2024 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո կազմակերպվող հանդիպումների

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հանդիպում	Մասնակիցներ	Օր	Ժամ
Հանդիպում 1	ՇՊՀ-ի ռեկտոր,	12.03.2024թ	14:00

	կենտրոնների տնօրեններ, ՈԱ բաժնի պետ ,ՈւԽ		
Հանդիպում 2	ՈԱ բաժնի պետ, ՈՒԱԲԳՀ բաժնի պետ, դեկաններ, ուսումական խորհրդատուներ, կուրսերի ավագներ	13.03.2024թ. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, Ռազմական ամբիոն	13:15
		14.03.2024թ. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	13:15
		15.03.2024թ. Հասարակական գիտությունների ֆակուլտետ	13:15
Հանդիպում 3	ՈՒԳԿԿ-ի պրոռեկտոր-տնօրեն, ՈԱ բաժնի պետ, ՈՒԱԲԳՀ բաժնի պետ, գուծատուներ /որոնց մոտ ՇՊՀ-ի ուսանողները նախորդ կիսամյակում անցկացրել են իրենց պրակտիկան/	19.03.2024թ.	15:00

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտոր	Ե. Սերոբյան
ՈՒսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ԺՊ	Ն. Ավետիսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ	Գ. Նիկողոսյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Արհեստակցական միության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի տնօրեն	Լ. Մարգարյան
Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Որակի ապահովման բաժնի պետ՝	Գ. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Լ.Մարտիրոսյան
Հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանի ԺՊ՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետ՝	Ա. Հովհաննիսյան
Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետ	Ռ. Քալաջյան